Գլուխ Հիսունհինգ

Լաց
880

№ 1377

Հ. ՍԵՆԿԵՎԻՉ

ԳԷՊԻ ԱՓԷՆՔ

Թարգմանեց

Գիւտ ջահանայ Աղանեանց

(Արտատպած „ԼՈՒՄԱՅ“ գրական հանդիսից).

ՏՓԽԻՍ
Ա. Շարադէի եւ Ը. Դիկ. Դիկ. 21.
Тип. М. Шарадзе и К°.
1896

910.4
Ս-40

2011
880
№ 1377

Հ. ՍԵՆԿԵՎԻՉ

ԳԷՎՐ ԱՐԹԷՆՔ

Թարգմանեց

Գիւտ քահանայ Աղանեանց

(Արտատպած „ԼՈՒՍԱՆ“ գրական հանդիսից)

ГОС. П. БИБ-КА АРМ. ССР
им. А. МЯСНИКЯНА
ЕРЕВАНЪ
ПОДАМЕН. БИБЛІОТЕКА
ЕРЕВАНСКАГО ИНСТИТУТА

1920

ՏՓԽԻՍ
Տպարան Մ. Շարաձէի եւ Ընկ. Նիկ. 21.
Тип. М. Шарадзе и К°.
1896

Дозволено цензурою Тифлисъ, 22 Декабря 1895 г.

6059
39
880-2011
հ.գ. 876

ԴԷՊԻ ԱԹԷՆՔ.

(Հ. ՍԵՆԿԵՒԻՉԻ)։

...Ստամբուլից դէպի Աթէնք ուղևորուելով ֆրանսիական Donnaï շոգենաւով, ես յափշտակուեցայ մի այնպիսի հրաշագեղ տեսարանով, որպիսին ես իմ կեանքում չէի տեսել։ Երկինքը, որ քանի մի շաբաթ շարունակ ամպերով էր ծածկուած, վերջապէս բոլորովին պարզուեցաւ և շիկնեց գեղեցիկ վերջալուսով։ Մերձակայ ասիական ափը լուսաւորուեց, Վոսփորն ու Ոսկեղջիւրը մի մի ահագին ոսկի շերտի էին նմանում, իսկ Պերան, Ղալաթան և Ստամբուլը, երանց աշտարակներով, գմբէթներով և մզկիթների մինարէներով, ոսկու և ծիրանի գոյնով ներկուեցան։

Donnaï-ն իւր գնացքն ուղղեց դէպի Մարմարա ծովը և սկսեց թեթև ալեկոծել ջուրը, զգուշութեամբ անցնելով շոգէ և առագաստաւոր նաւերի, նաւակների ու մակոյկների միջով։ Կոստանդնուպոլիսը Եւրոպայի ընտիր նաւահանգիստներից մէկն է, և այս պատճառով այդ քաղաքի ստորոտում, որ իւր բլուրների բարձունքից իջնում է երկու ծովերին, մի ուրիշ քաղաք է եռում՝ նաւերի քաղաքը։ Ինչպէս այն քաղաքի մէջ բարձրանում են մինարէներ, այստեղ էլ կայմերն են վեր

ուղղուած, իսկ սոցա վերայ բազմերանգ դրօշների մի ամբողջ ծիածան։ Այստեղ ևս պակաս աղմուկ չէ լինում, քան այնտեղ, լերան գլխին։ Այստեղ էլ լեզուների, ցեղերի, մորթի, հագուստի նոյն խառնուրդն է, ինչ որ այնտեղ։ Այստեղ կտեսնես ամեն տեսակ տիպեր, որոնք միայն կան աշխարհի շրջակայ երեք մասերում, անդլիացիներից սկսած մինչև Փոքր Ասիայի կիսավայրենի բնակիչները, որոնք լցուել են մայրաքաղաքը, որպէս զի «թիավարի» անունով օրուայ հացը վաստակեն։

Մենք հասանք այն հրուանդանին, որի վերայ բարձրանում է Հին Սէրայը։ Պերան, Ղալաթան ու Ստամբուլը սկսան ձուլուիլ մէկ քաղաք դառնալ, որի սահմանները աչքով ընդգրկել անհնար էր արդէն։ Ոչ Նէապոլը և ոչ աշխարհիս մի ուրիշ քաղաք չէ կարող հաւասարուիլ այս սքանչելի տեսարանին։ Բոլոր նկարագրութիւնները, Լամարտինից սկսած մինչև Ամիչիսը, լոկ միայն մի աղօտ նմանութիւն ունին իրականութեան, վասնզի մարդկային խօսքը՝ միայն հնչիւն է, և՝ ոչ այդ գոյները, ոչ էլ այդ ձևերը, որոնք տեղ տեղ ներդաշնակ են ու օդային, տեղ տեղ հսկայական են ու ահարկու, նկարագրել չէ կարող նա։ Երբեմնապէս ինձ թուում էր, թէ կախարդական պալատների մի ամբողջ քաղաք օդի մէջ է կախ ընկած, իսկ այդ զգացողութիւնը տեղի էր տալիս մի այնպիսի մեծութեան ու կարող զօրութեան տպաւորութեան, որպէս թէ այս քաղաքը տակաւին երկիւղ էր ազդում ամբողջ Եւրոպայի վերայ, կարծես թէ Սերասքերիի աշտարակում այժմ էլ, ինչպէս և հնում, վճռուում էր աշխարհիս բաղդը։ Մարմարա ծովից կարելի էր արդէն միայն ամենախոշոր շինուածքները զանազանել հասարակ աչքով, այն է Հին Սերայը, Եդիկուլէի պարսպի մի մասը եօթն աշտարակների հետ, Սուրբ Սոֆիան,

Սուլէյմանիէն և Սերասքերիի աշտարակը։ Փոքր առ փոքր քաղաքի ստորոտը սկսում է ծածկուիլ ջրի տակ. ամենից առաջ չքանում է շրջապարիսպը, յետոյ ցածր տների շարքը, այնուհետև աւելի բարձրները, յետոյ մզկիթներն ու նոցա գմբէթները։ Կարծես թէ քաղաքն ընկղմում է ծովի մէջ։ Երկինքն էլ սկսում է մթագնել, արդէն ժանիքաւոր մինարէների վերայ միայն ընկնում են էլի կարմիր և ոսկէ շողքեր։ Կարծես թէ հաղարաւոր մեծամեծ կերոններ լինին վառած աներևոյթ քաղաքի վերայ։

Այս այն րոպէն է, երբ մօլլաները դուրս են գալիս մինարէների փոքրիկ պատշգամբների վերայ և հաւատացեալներին աղօթքի հրաւիրելով, յայտնում են աշխարհի չորս կողմը, թէ Աստուած մեծ է և թէ աստուածային գիշերը իջնում է երկրիս վերայ։

Եւ վրայ հասաւ գիշերը, աստուածային, խաղաղ և աստղալից գիշեր։ Դա խորհրդածութեան միջոցն է, բայց որովհետև հանդերձեալ աշխարհի կամ պատերազմի վիճակը իսկապէս պահուած է այս դաշտավայրերի շրջակայքում, ուստի դժուարին էր ինձ խուսափել քաղաքական ենթադրութիւններից։ Բայց ես դոցանով չեմ զբաղուի,—դա լրագիրների գործն է։ Եթէ իրականութիւնը նոյն իսկ խաբէ նոցա, նոքա դարձեալ հազիւ թէ սկսեն անբարեմիտ վերաբերուել իրանց մասնագիտութեան։ Ինձ, իբրև վիպագրի, աւելի շուտով զբաղեցնում է գրականական կողմը, և ես շտապում եմ գոնէ մասամբ գծագրել թղթի վերայ։

Այսպէս ուրեմն, ինձ այնպէս թուեցաւ, որ վերջալուսի այդ փայլը, այդ ծովը, պալատները և մինարէները, որոնք ողողուում էին ոսկու և ծիրանու գոյներով, մի տեսակ նոյնպէս ըէալական էին և իրական, ինչպէս նաև այն ծերը շները, որոնք խումբ խումբ թա-

փառում են Ստամբուլի փողոցներում։ Բայց այնուամենայնիւ կան մի շարք գրողներ, որոնք նախադասում են ծերը շներին նկարագրել, քան ոչ նուազ ըէալական՝ արևի մուտը, կապուտակ ծովի ընդարձակութիւնը և սրա նման հրաշալի տեսարաններ։ Ինչո՞ւ։ Երևի թէ զանազան պատճառներ կան, բայց դոցա մէջ կայ և այն, որ գեղեցկութիւնը իւր բոլոր շուքով ձևակերպելու համար պէտք է ունենալ աւելի մեծ ոյժ, աւելի գոյներ նկարի տախտակի վրայ, քան գարշութիւնը նկարագրելու համար, և որ առհասարակ աւելի հեշտ է զզուանքը գրգռել քան հոգին։

Բայց ես ամենևին չեմ ցանկանում բանակռիւ մղել, — ես միայն նկարագրեցի իմ միտքը, իսկ այսուհետև շոգենաւիս ետևից կլինեմ։ Փոստային նաւերը, որոնք երեկոյեան դուրս են գալիս Ստամբուլից, լուսաբացին հասնում են Դարդանել, իսկ լուսադեմին մտնում են Արքիպելագ։ Մենք արդէն Դարդանելն էինք հասել։ Շոգենաւը ընթանում է նեղ անցքով, ափերի մէջ տեղից, որոնց վերայ երևում են ամրոցներ և դէպի նեղուցն ուղղուած թնդանօթների սև բերաններ։ Մենք կանգ ենք առնում, որովհետև նաւակը նախ քան նեղուցից դուրս գալը պէտք է իւր թղթերը ներկայացնէ և բացատրէ թէ ո՞րտեղից և ուր է գնում։ Ափը ներկայացնում է անպտուղ, դէզադէզ ժայռեր, որոնք աստիճանաբար հողմահարւում են ու փշրւում։ Ամբողջ երկիրը, — մանաւանդ այդ միջոցին, երբ արևն սկսում էր ծագել և պայծառ գեղազարդել նորա բոլոր գծերը, — մռայլ էր ու ամայի։ Իսկական նեղուցը նեղ է Վոսփորից։ Աջ կողմում սպիտակին են տալիս գալլիպոլիի լքեալ, խղճուկ տնակները, — դա այստեղից էլ նկատւում է։ Եւ նորից հարց է զարթնում մարդուս մէջ, որպիսին կրկնւում է գրեթէ ամեն կողմ Արևելքում, —

Ռուշչուկում, Վարնայում, Բուրգասում և նոյն իսկ Ստամբուլում. թէ՝ մի՞թէ սա այն վայրն է, որի համար այնքան արիւն է թափուել, որ նրանով կարելի էր այս ամբողջ նեղուցը լցնել։ Մի՞թէ այս քաղաքների համար, որոնք կիսով չափ ներկայացնում են չքաւոր ազգաբնակութիւնների բնակավայրերի աւերակներ, այս անբերրի դաշտերի ու ժայռերի համար, միլիոններ են ծախսւում, հրամայական զօրաբանակներ պահւում մև մեր սերնդի կեանքը անցնում է մի յուզիչ անորոշութեան մէջ, թէ ե՞րբ պիտի հասնի օրը և ժամը... Դարդանէլում աւելի, քան ուրևիցէ, ամեն մարդ պէտք է այդ հարցը տայ ինքն իրան։ Կան վայրենի տեղեր, որոնք մելամաղձութեան տիպար են ներկայացնում, բայց մէկը չկայ, որ սորա նման պարզ ասէ. ես-մարմնացած ծերութիւն եմ և քայքայումն, ես-աւերածութիւն եմ և չքաւորութիւն։ Այն ինչ այս նեղուցի մէջն է այդ հարցի բոլոր էութիւնը։ Խօսքը այնքան Վոսփորի մասին չէ, նոյն իսկ այնքան Կոստանդնուպոլսի մասին չէ, որքան Դարդանէլի։ Երկրի այս նեղ շերտը, այս ժայռուտ նրբանցքը — միակ պատուհանն ու դուռն է, որ տանում է այս կողմերից դէպի Լոյս աշխարհ։

— Երբ ևիցէ դուք կարդացել էք այն խրացների մասին, որ սուլթանները ուղարկում էին երբեմն իրանց մեծ վեզիրներին կամ զօրավարներին, երբ սոքա յաղթւում էին պատերազմի մէջ. — հարցրեց ինձ անգլիացի ուղեկիցս։ — Ա՜յ այս նեղուցը հէնց այդպիսի մի խրաց է. դորանով կարելի է խեղտել Սև ծովն և նոյն իսկ Կոստանդնուպոլիսը։

Մենք արդէն մտանք Արքիպելագը, այն հռչակաւոր ծովը, որի մասին հին յոյները ասում էին, թէ նաւերկնքի նման, — այնպէս է զարդարուած կղզիներով, ինչպէս երկինքը աստղերով։ Երևի թէ հէնց այս պատճա-

ռով էլ նորա անունը դրել են արք-ծով։ Երևացին Լեմ-նոսի ժայռերը, առաջին կղզին, որ համարեա թէ գըտնուում է նեղուցի հէնց ելքի մօտ։ Մի փոքր դէպ հիւսիս նոյնպէս պայծառ գեղգեղում էր մարգարտանման Իմբրօն, միւս կողմից-ասիական ափին մօտ. Տէնէդոսը։ Մարգարէի դրօշակը տակաւին ծածանում է այդտեղ, բայց ամբողջ Արքիպէլագի վերայ իշխում է հին յունական աւանդութիւններն ու երգերը։ Գուցէ այդ յիշողութիւնների տպաւորութեան ներքոյ այդ ափերը նըման չեն նորան, որ ներկայանում էր մեր տեսութեան փոքր ինչ առաջ, այլ աւելի համապատասխանում են այն շրջագծին, ինչ տեսակ որ երևակայութիւնը գծագրում է յունական ափերը։ Այն ամենը, ինչ որ երևում է—մերկ է և անբերրի, ինչպէս Դարդանէլի շրջակայքը,—ոչ ծառ, ոչ մարդկանց բնակարան. գետինը գորշ ձիթենու գոյն ունի, կարծես այրուած լինի և արևից գունաթափ,—բայց այս ամենը գծագրուած է երկայն և ուղիղ գծերով, կարծես գօրիական սկզբնական ոճի տարրական օրինակներ լինէին։ Բլրակները դիզուում են մէկը միւսի վերայ,—տեղ տեղ երևում է դէպի վեր որևէ առաւել մեծ ժայռի հեռաւոր կապոյտում հազիւ նըշմարուող գագաթը։ Այս ամենի հետ էլ անճաշակ և կարևոր մելամաղձութիւն։ Մի ժամանակ, ըստ աւանդութեան, Լեմնոսի հրաբուղխի մէջ բաղխում էին Հէփէստոսի մուրճերը։ Գուցէ հէնց այդտեղ էլ կռեց նա Աքիլլէսի հռչակաւոր սուրը։ Այժմ Մօսիքլոսի բերանում հրաբուղխը վաղուց հանգել է և միայն աւանդութիւնը պահպանել է հրաբուղխը և նոյն իսկ չաստծուն։

Աչ և ձախ-բոլորը կղզիներ են, բայց ես չեմ թուի նոցա, որպէս զի ընթերցողիս ուշադրութիւնը չյոգնեցնեմ։ Արքիպէլագում աչքի տեսութեան հորիզոնն աւելի մեծ է, քան եւրոպական ուրիշ ծովերում։ Նոյն իսկ

ամենահեռաւոր կղզիները այնպէս մաքուր և պարզ են երևում, որ կարծես թէ կարելի է որոշել ծերպի իւրաքանչիւր խոռոչն և այն թուփերը, որոնցով ծածկուած է նոցա կողերը։ Այստեղ երկնքից այնքան լոյս է թափւում երկրի վերայ, որ նոյն իսկ Իտալիան էլ չէ կարող որև է հասկացողութիւն տալ դորա մասին։ Ծովն ու երկինքը չէ թէ միայն երկնագոյն են, այլ նաև վառվռուն. ուրիշ տեղերում արևը լուսաւորում է և այրում, իսկ այստեղ նա, կարծես, թափանցում է բոլոր շրջակայքում, աննդում է նորան, յագեցնում և միախառնւում է նորա հետ, ամենափոքրիկ ստուեր անգամ չթողնելով։ Այս պատճառով այստեղ ոչինչ բան այնպէս սուր չէ գծագրւում, ինչպէս, օրինակ, Միջերկրական ծովի ափերի մօտ։ Բոլոր տեսարանները, որոնց վերայ ընկնում է արևի ճառագայթը, միևնոյն ժամանակ և չափից դուրս պարզ են, և՛, չնայելով սորան, ներդաշնակ։

Արք-ծովը շարունակ հանդարտ չէ լինում։ Նոյն այն կոհակները, որոնք Ոդիսևսի նաւակը մերձեցրին ցիկլօպներին, այժմ էլ երբեմն լողում են կղզիների մէջերքը վախեցած ձիերի երամի նման. ալիքը շառաչում է և ցայտում ձիւնի պէս սպիտակ փրփուրներով մինչև ափերի մօտ գտնուած ժայռերի ամենաբարձր գագաթները։ Բայց այն վայրկենին, որի մասին է իմ խօսքը, կապոյտ տարածութիւնը հարթ էր ինչպէս հայելին, և միայն շոգենաւի ետևից ձգւում էր լայն փրփրալից հետք։ Ամբողջ օրուայ ընթացքում հողմի չնչին նշան չերևցաւ։ Շոգենաւը կարծես ընթանում էր մի լճի վերայ, ուստի ամբողջ տախտակամածը լիքն էր ուղևորներով։ Պակաս չէր նաև բազմերանգ հանդերձները, որովհետև ատենացի կանայք Եւայի ուրիշ դուստրներից աւելի են սիրում իւրաքանչիւր յարմար դէպքում ձգել իրանց վերայ ինչ որ լաւ բան կայ։

Հաճոյքը տախտակամածի վերայ տևեց մինչև ուշ գիշեր։ Յոյները շատ շուտ են ծանօթութիւն կապում, գուցէ նորա համար, որ բաւարարեն իրանց բնածին շատախօսութիւնը։ Նոցա սիրալիութիւնը վերին աստիճան յանդուգն է, ուստի և հազիւ թէ անկեղծ համարուի։ Բացի այդ նոքա առհասարակ չափազանց պարծենում են ոչ միայն իրանց անցած, այլ և ներկայ քաղաքակրթութեամբ։ Ինչ էլ որ լինի, նոքա օտարականին թուում են յունական այժմեան նշանաւոր բաների անունները, որոնք որպէս թէ Եւրոպայումն էլ յայտնի են, և զարմանում են, եթէ ով և իցէ չէ լսել նոցա մասին։ Այս ու այս գեղարուեստը բոլորովին վայր ձգեց Ժերմին իւր վերջին նկարով, այս ու այս գիտնականը Պաստեօրից քանի մի տարի առաջ սկսեց կատաղածի բժշկութիւնը,—որ, հարևանցօրէն խօսելով, աւելի նորանով է զարմանալի, որ այդ հիւանդութիւնը չկայ հարաւում։ Այսպիսի զրոյցներ լսելով մտածում ես, թէ Աստուած երբեմն իւր գործերը կատարում էր Ֆրանսիացիների օգնութեամբ, իսկ այժմ, միայն առաւել փոքր յաջողութեամբ, օգնում է յոյներին։ Եթէ այժմ աշխարհումս մի հիմնաւոր բան է կատարւում, լաւ որ փնտռես-կը-գտնես յոյնին։

Արքիպելագի վրայ գիշերը նոյնքան հրաշալի է, ինչքան և ցերեկը։ Այդ տեսակ գիշերները Հոմերոսն անուանում էր «ամբրոսեան»։ Կղզիների ստորոտները պատած է լինում թեթև մառախուղով, սակայն լուսինը պայծառ արծաթազօծում է լեռների կատարները. երկնքում ամպի նշան չկայ, իսկ ծովը ամբողջովին երփներանգուած է արծաթեայ շերտերով։ Դոցանից մէկը, ամենից լայնը, լուսնից է շողում, միւսները աստղերից։ Այս երևոյթը հիւսիսում անծանօթ է, բայց հարաւային ծովերում ես յաճախ տեսել եմ այս արծաթանման

ուղիները։ Մենք լողում էինք այնպիսի մի խաղաղ դրութեան ժամանակ, որ պտուտակի ամեն մի դառնալու ձայնը լսելի էր մեզ։ Հորիզոնի վերայ կարելի էր նշմարել մի քանի նաւ կամ աւելի ճիշտ, նոցա լապտերները, որոնք ինչպէս բազմերանգ շարժուն կէտեր կախուած էին օդում։

Այդ նաւերը մեծ մասամբ նոյնպէս մեզ նման գալիս էին Պիրէյ, ուր մենք մտադիր էինք հասնել լուսադէմին։ Եւ յիրաւի, արեգակի նախընծայ ճաճանչն երևալիս շոգենաւի պտուտակը լռում է, մենք շտապով դուրս ենք վազում տախտակամածը... Պիրէյ... Ատտիկէ։ Ես հաւատացած եմ, որ ամենաանտարբեր մարդն անգամ առանց յուզման չէ ոտք կոխում այդ երկիրը։ Մի ժամանակ Հռովմի պապին մատուցին ամբողջ Իսլամի դրօշը, որ ձեռք էր բերուած Վեննայի մօտ, և նորա փոխարէն խնդրեցին նորանից որև է մասունք։ Պապը դեսպաններին այսպէս պատասխանեց. «Դուք ինձանից չպէտք է խնդրէք մասունք, վերցրէք ձեր հողից մի բուռն,—նա ամբողջովին շաղախուած է նահատակների արիւնով»։ Բոլորովին նոյնը կարելի է ասել և այդ ատտիկեան հողի մասին, որ նորա ամեն մի բուռը ողողուած է յունական մտքով և արուեստով։ Դուք անշուշտ լիշում էք Ֆաուստի երկրորդ մասից «մայրերին»,—աշխարհիս սահմաններից դուրս գոյութիւն ունեցող այս նախագաղափարները, որոնք այնքան քարձր են իրանց անորոշ միայնութեան մէջ, որ մինչև անգամ մարդ սարսափում է։ Ատտիկէն ոչ անսահման է, ոչ ահաւոր, այնուամենայնիւ իմացական մայրն է բոլոր քաղաքակրթութեան։ Եթէ նա չլիներ՝ յայտնի չէ, թէ մենք ուր կլինէինք և ինչ կըլինէինք։ Նա հին աշխարհի արեգակն էր, իսկ իւր պատմական անկումից յետոյ այնպիսի մի փայլուն վերջալոյս թո-

ղեց, որ նորա շուքից կարող էր մի ըէնեէսանս յարուցուիլ միջնադարեան խաւարից յետոյ, Ասում են՝ Ատտիկէ, փոխանակ Յունաստան ասելու, որովհետև ինչոր Եէլլադան էր ամբողջ աշխարհի համար, նոյնը Ատտիկէն էր Եէլլադաի համար։ Միով բանիւ, մենք իջանք ցամաք և մեզ գտանք աղբիւրի մօտ։

Միւս քաղաքակրթութիւնները, դրացի ասիական և աֆրիկեան ցամաքների վերայ, ուրիշ ազգերի մէջ, հրէշութեան հասան,—միայն ատտիկեանը մնաց մարդկային. Նոքա չքացան զանազան արտակարգ երևակայական ցնորքների մէջ,—իսկ սա միայն գիտութեան և արուեստի հիմք ընդունեց բէալական աշխարհը, իսկ հետը միասին այս պարզ-բէալական տարրերից գիտեցաւ ստեղծել ամենամեծ չափակցութիւն. համարեա աստուածային ներդաշնակութիւն։ Նա գիտեցաւ աստուածայինը լինել, չդադարելով մարդկայինը լինելուց և սա բացատրում է նորա նշանակութիւնը։

Այն վայրկենին, երբ ես ոտք դրի ցամաք, երկընքում բացուեց «վարդաճաճանչ» արշալոյսը։ Պիրէյից Աթէնք կարելի է գնալ երկաթուղով, բայց աւելի լաւ է կառք վերցնել և տեսնել այն ամենը, ինչ որ կհանդիպի կէս ժամուայ ճանապարհի ընթացքում։

Ճանապարհը Պիրէյից սկսած, որի երկու կողմերում տնկուած են սարոյ (platans) կոչուած ծառերից, ընթանում է այսպէս անուանած ատտիկեան հովտի միջով, որ ոռոգւում է, կամ աւելի ուղիղն ասած, կարող էր ոռոգուիլ Կէֆիզից։ Այստեղ ամեն մի յատուկ անուն արձագանք է յարուցանում և պատմական յիշատակներ յիշողութեան մէջ։ Եթէ այդպէս չլինէր, Կէֆիզը մեծ յարգանք չէր ազդի. Լեհաստանում կամուրջներ կան, որոնք իսկապէս չկան,—Կէֆիզն այնպիսի գետ է, որ իրօք նոյնպէս չկայ, այսինքն նորա չորացած և այ-

րուած տաշտի մէջ մի կաթիլ ջուր չէ հոսում։

Այն դաշտավայրը, որով մենք գնում էինք,—նեղ էր։ Ձախ կողմը, Էլէվզինի ծոցի ուղղութեամբ, երևում են Դափնի և Պօիկիլէն լեռները, աջ կողմը՝ մեղրահոս Հիմէտը և Պէպտէլիկոնը, որը այժմ էլ, ինչպէս և հընում, մեծ քանակութեամբ մարմար է մատակարարում Աթէնքին։ Այդ երկիրը կարծես արևի կայարանն է, ամայի և անպտուղ։ Դաշտերը, բլուրներն ու ժայռերը մոխրի գոյն են տալիս, վերին աստիճանի քնքոյշ, բաց կապուտի խառնուրդով։ Սա այն գոյնն է, որ ամեն գոյնին շուք է տալիս ինչպէս կղզիների, այնպէս էլ ցամաքի վերայ։

Ճանապարհի կիսում Ձիթենու փոքրիկ անտառն էլ կարծես մոխրով է ծածկուած։ Իսկ այս ամենի վերայ կապոյտ անամպ երկինքը, ոչ այնպէս խիտ ինչպէս Իտալիայում, դորա փոխարէն, ինչպէս արդէն ես յիշեցի, հարիւր անգամ աւելի լուսաղեղ նորանից։ Գետինը՝ կարծես թէ մէկի ձեռքով աւերուած լինի։ Ծայռերը հողմահարւում են, փշրտւում են և քանդւում։ Այս ամենը շրջակայքին փլատակների ու անապատի տեսք է տալիս։ Բայց այնուամենայնիւ սիրուն է... Նորան սազ է գալիս թէ այս խաղաղութիւնը, թէ զառամելութիւնը, Ձիթենու անխօս ծառատունկերն ու անբերրի ժայռերը։

Գլխաւոր ուղին հասնում էր մինչև երկաթուղու կայարանը, որ Հերմէսի փողոցի ծայրին է գտնւում. բայց, քաղաքին չհասած, մենք թեքւում ենք դէպի աջ և մտնում ենք ծառուղին, որի այս և այն կողմը տնկուած են պղպեղի ծառեր։ Մեր ուշքը գրաւում է մի ուղղահայեաց ժայռ մի շարք դեղնագոյն սիւներով, որոնք միաւորուած են ճղքճղքուած քովթարներով (Architrave)։ Այս բոլորը, կարմրատակած արշալուսի ճա-

ճանչների շնորհիւ, արտասովոր պարզութեամբ և գեղեցկութեամբ նկարւում էին կապոյտ երկնքի մակերևոյթի վրայ,—որ ծաւալով տառանձին մեծ չէր, բայց մեծերից մեծն էր կազմում ըստ ներդաշնակութեան,—պարզապէս ասած աստուածային էր։ Կառապանի մօտ նստող թարգմանը դառնում է դէպի մեզ և ասում.

—Ակրոպոլիսն է։

Մեզանից ոչ հեռու, Կէրամիկի վերայ, բարձրանում է Թէզէոսի տաճարը, որ հին աշխարհի բոլոր յուշարձանների մէջ ամենից լաւ պահպանուածն է։ Այնուհետև ամեն մի քայլափոխին տեսնում ես որև է մնացորդներ. պելազգեան պարիսպներ, Պնիկսի ժայռը, Սոկրատէսի այրը և ուրիշ քարայրեր, որոնք ժայռերի բարձունքից ցերեկուայ լուսի տակ ցած են նայում իրանց մռայլ բերաններով։ Նոյն իսկ լերան սակ փոքրիկ լեռնաշղթան ծածկում է Պարթէնոնի գիծը,—բայց միևնոյն ժամանակ մի ամբողջ քաոս է բացւում Օդէօն Իրոդի և Բագոսի թատրոնի աւերակների տեսարանների։ Աչքը մի տեղից միւսն է վազում, երևակայութիւնը գործում է, ցանկալով նոր կեանք շնորհել հանգած կեանքին, միտքը չէ կարողանում այդ բոլորն ընդգրկել, և ակամայից բաւականանում ես տպաւորութիւնների հասարակ ըմբռնումով։ Զգում ես միայն, որ յիրաւի արժէ այստեղ գալ, որ այստեղ չպէտք է Բէդէքերը ձեռքիդ ձեռաց վեր ու վայր նայես և փափագես շուտով հիւրանոցը դառնալ։ Բայց կաւքդ արագ սահում է այս կիսա-աստուածեղէն ժայռերի մօտից և մենք յանկարծ տեսնում ենք մեզ նոր քաղաքում, նոր Աթէնքում։

Խօսենք նախապէս դորա մասին, նախքան կերթանք Ակրոպոլիս։

Ես եկայ այստեղ, այնպէս սովոր արևելեան ցեխին,

մանաւանդ Ստամբոլի ցեխին, որը մարդու նեարդերի ոյժից վեր է, որ ամենահաճոյ հիասթափութիւն կրեցի։ Ամենից առաջ, ճշմարիտ չէ, որ Աթէնքում այնչափ կանաչ կայ, ինչքան կանաչեղէն մօտ կբերեն քեզ ճաշի ժամանակ, գուցէ այն պատճառով, որ կանաչը շատ քիչ է այդ կողմերում, քաղաքն ամեն ջանք գործ է դրել, որպէս զի իւր հրապարակներն ու փողոցները ծառերով զարդարէ։ Ես քաղաք մտայ Ակրոպոլսի և Ոլիմպիոնի մօտից, Պանէլինեան ծառուղիով, որ մի խիտ կանաչ ժապաւէնի է նմանում։ Պղպեղի ծառերը, իրանց պայծառ կանաչ շքեղ տերևներով յիշեցնում են արտասուող ուռիները և ծառուղին մի տեսակ գարնան տեսք են տալիս։ Ամեն կողմ պարտէզներ, իսկ պարտէզներում արմաւենիներ, սև կաղնիներ, կակտուսներ ալօէներ։ Ճշմարիտ է, այս բոլորը ծածկուած են սև փոշիով, որոնք փոխադրւում են այստեղ ժայռերից և աւերակներից, կարծես այս հանգուցեալները ցանկանում են ասել իւրաքանչիւր կենդանի արարածին. «Հող էիր և ի հող դարձցիս»,—բայց այստեղ ևս կարելի է գտնել թէ ստուեր և թէ զով։ Քաղաքի բոլոր փողոցները լայն են, տները մեծ-մեծ, աչք կուրացնելու չափ սպիտակ, մարմարով շքեղ զարդարուած, որ մինչև այժմը ստանում են Պէնտէլիկոնի մերկ կողքերից։ Այստեղի շինուածքները զուրկ չեն ոչ գեղեցկութիւնից, ոչ թեթևութիւնից,—բացառութիւն է կազմում միայն արքայական պալատը։ Սորա պատերն էլ պէնտէլիկոնեան մարմարից են շինուած, բայց ոճը ծանր է, զօրանոցաձև, և պալատը ոչ թէ միայն չէ զարդարում Օրէնսդրութեան գլխաւոր հրապարակը, այլ ուղղակի տգեղացնում է նորան։ Ճշմարիտ է, պալատի ետևը, մէկ կողմից, իսկ և իսկ սքանչելի արքայական պարտէզ է գրցած, բայց միւս կողմից առջևի կողմը մինչև քաղաքա-

յին ծառատունկը ձգւում է կատարելապէս աւազուտ մի անապատ։ Որպէս զի ոչ մի բան չխանգարէ անապատի տպաւորութիւնը, նորա վերայ բարձրացած են ահագին արմաւենիներ, որոնք պարզ դուրս են ցցուած աւազի գորշ մակերևոյթի վերայ։ Ինչևիցէ, բայց Աթէնքը մաքուր և կատարեալ եւրոպական քաղաք է, որ միայն շինուած է դիւրահասկանալի կշռադատութիւնների ազդեցութեան տակ, հին յունական ճարտարապետութեան օրինակով, և այս տալիս է նորան մի հոյակապ տեսք։ Ամեն կողմ հանդիպում ես դորէական, յոնիական և կորնթական սիւների, գոտիների (Frise), որոնց մարդը սկսել է շինել և աւարտել է արեգակը։ Համալսարանը և մանաւանդ գեղարուեստից ճեմարանը իւրեանց ներդաշնակ ձևերով յունական հոյակապ տաճարների նմանութիւն են բերում։

Կամարակապ սրահի մօտ երկու սիւն է կանգնած պէնտէլիկոնեան մարմարիոնից, ոսկեզօծ թակաղակներով (abaque)։ Մէկի վերայ կանգնած է հսկայական Աթենաս-Պալլասը սաղաւարտը գլխին և աղեղը ձեռին, միւսի վերայ—Նոյնպիսի հսկայաձև Ապօլլօնը քնարով։ Գիշերը, լուսնի լուսի տակ, այս արձանների մարմարիոնը բաց-կանաչ է թւում և այն աստիճան կախարդական-թեթև, կարծես թէ հենց այն է երկրից դէպի վեր պիտի սլանան։ Գուցէ մասնագէտ ճարտարապետը որև է պակասութիւն գտնի այս շինուածքների ձևի մէջ, բայց, ինչ էլ որ լինի, նոքա իմ տեսածների մէջ այդ քաղաքի ամենագեղեցիկ տեսարաններից մէկն են կազմում։

Քաղաքի ամենահարուստ մասը, այսինքն Օրէնսդրական հրապարակի և արքայական պալատի կողմ գտնուածները, այնուհետև Պանէլինեան ծառուղին, Համալսարանական ծառուղին, Ստադիօն փողոցը և ուրիշ շատերը մինչև նոյն իսկ Համաձայնութեան հրապարակը, կառուցել են Ստամբուլեան Ֆանարի, Օդեսսայի, Մարսէյլի և նաւահանգստային ուրիշ քաղաքների հարուստ յոյները։ Այս մարդիկ, յունաց բնածին առևտրական ընդունակութեամբ, միլիոններ են վաստակել, բայց նոցա չպէտք է մեղադրել, նոքա չեն կորցրել դորանով իրանց յունական հոգին։ Օդեսսայի կամ Մարսէյլի վաճառականը, որ իրան կարող էր Միլտիադի սերունդը համարել և մատնանիշ անել Մարաթոնի վերայ, Լէոնիդի սերունդ համարել և ցոյց տալ Թերմօպիլէն, Թիդէի կամ Ալէքսէի՝ և իրեն վկայ կանչել Ակրոպօլսի աւերակները,—իւր ետևն ունէր այն, որ ոչ մի կերպ դրամով չէ կարելի ձեռք բերել։ Եւ ահա, այս փառաւոր անցեալի և նորա յիշատակութեան շնորհիւ, ամեն կողմից միլիոններ թափուեցան Աթէնք, վայրենի անձաւների մէջ երկաթուղիներ ու խճուղիներ ձգուեցան, վայրենի պալիկարներով բնակեցրած քաղաքներում դպրոցներ կանգնեցան, իսկ հին Աթէնքի աւերակների վերայ—կառուցաւ նոր Աթէնքը։

Այստեղի առևտրականներն ու վաճառականները կենում են գլխաւորապէս Հերմէսի փողոցի երկայնութեան վերայ, որ, ինչպէս յայտնի է, տակաւին Զևսի ժամանակ առևտուրի հովանաւորողն էր։ Առհասարակ քաղաքի ամբողջ ներսի մասը, դէպի Հար և Կէրամիկ, նորա խնամատարութեան տակ է գտնւում։ Այստեղ է և շուկան, որ յիշեցնում է արևելեան միւս շուկաները. այստեղ է խմբուած շարժուն ամբոխը, որոնք այնպէս ամուր շարժում են իրանց ձեռները և այնպէս բարձր են խօսում, կարծես թէ ուզում են ամեն անցորդի խըլացնել։ Կեանքն և առուտուրը փողոցներումն է կենդրոնացած, ինչպէս առհասարակ արևելեան քաղաքներում. երեկոները, երբ ցերեկուայ շոգը քիչ մեղմանում

39

880-2011

է, շարժողութիւնը առաւել զօրանում է։ Խանութները բաց են լինում մինչև կէս գիշեր։ Գազային լապտերների պայծառ կրակները լուսաւորում են ապրանքների պահեստները, պատուական խաւարտներն ու ծաղիկները։

Սակայն չորս ժամից սկսած փողոց են դուրս գալիս և քաղաքի առաւել հարուստ մասի բնակիչները։ Ստադիոնը, ուր իմ կացարանն էր,—նորասէրների զբօսավայրն է. նորա սալայատակների վերայ դժուար է շարժուել, իսկ փողոցի մէջ տեղը կառքերը միմեանց ետևից են շարուած։ Կանայք առհասարակ քիչ են, քան այր մարդիկ, մանաւանդ ոտով մանեկողներից։ Գուցէ սա արևելեան ազդեցութիւնների մնացորդ է, բայց կարելի է կանանց տանը փակելու սովորոյթը նորոգուել է և աւելի արմատացել դեռ տաճկական տիրապետութեան ժամանակից, երբ նորատի կինը առանց վտանգի չէր կարող երևալ բիմփաշաների և բէյերի աչքերին։ Կանացի գեղեցիկ դէմքեր քիչ կան։ Տիպերը առաւել նման են հայկականին, քան յունականին։ Ֆրինի և Լայսի ժամանակները վաղուց անցել են և ոչ մի արէօպագ անմեղադիր չէր թողնի այժմեան յոյն կնոջ նորա գեղեցկութեան առթիւ։ Ես կարդացել եմ, որ Մէգարի և հին Լակոնիայի, ինչպէս նաև քանի մի կղզիների բնակչուհիները մինչև այժմ պահպանել են հելլենական գեղեցկութեան հին տիպը, բայց Մէգարում ես այդ չնկատեցի, իսկ Էվբոտի ափերին, նոյնպէս և կղզիներում, չեմ եղած։

Դորա փոխարէն այր մարդկանց մէջ շատ դէմքեր կան և գեղեցիկ և վայրենի միևնոյն ժամանակ։ Ի հարկէ, պայծառ դանդրահեր Աքիլլէսը նման չէր այժմեան տիպին, բայց Կանարիսը կարող էր նմանուիլ։ Այստեղ շատերը դեռ ալբանական զգեստ են կրում, որ բաղկացած է ֆուստանելլիից, այսինքն սպիտակ, գրեթէ մինչև ծնկները հասնող ներքնազգեստից, ֆէսից և մետաքսով կամ ոսկեթելով հարթակար կապայից։ Աղջիկների շուրջը պատում է գօտին, որի մէջ երբեմն թրերի և ատրճանակների մի ամբողջ զինանոց կար խրուած, իսկ այժմ ամրացած է թաշկինակը։ Զնայելով նորան, որ թաշկինակը ներկայանում է իբրև մի աներկբայելի յառաջադիմութիւն առաջուան ժամանակների հետ համեմատած, ֆուստանելլա կրող մարդիկ կատարեալ պահպանողականներ են և արևմտեան ազդեցութեան հակառակորդներ։ Այս պալիկարների նման են հագնուած ամբողջ զօրագնդեր, և սա բոլոր քաղաքին մի ինքնուրոյն տեսք է տալիս։ Գիւղերում ապրող յոյները, չնայելով աւաղակային միտումներին, որոնք կարծես ամեն տեղ չեն անհետացել, ազնիւ են, աշխատասէր և միանգամ տուած խօսքին հաստատ. իսկ ինչ վերաբերում է քաղաքացիներին, նոցա համբաւը յայտնի է ամբողջ աշխարհին։ Մօտ մի ամիս ապրած լինելով նոցա հետ, ես չեմ կարող այս մասին խօսել իմ անձնական դիտողութիւններով, բայց այս կարճ ժամանակամիջոցն էլ բաւական էր նկատելու, որ ոչ մի ուրիշ քաղաքում ոչ վաճառականները, ոչ հիւրանոց պահողները, ոչ ուղեկիցները, ոչ սեղանաւորները—իրանց ազնուութեան մասին այնքան շատ չեն խօսում, ինչքան Աթէնքում։ Այս կարծես մի փոքր կասկածելի է։

Նորագոյն ճանապարհորդները, որոնք երկար են մնացել Յունաստանում։ կամ նոքա, որոնք քիչ են մընացել, բայց աւելի մեծ վստահութիւն են ունեցել, բոլորովին անյաջող դատավճիռ են կարդում նորագոյն յոյների համար։

Նորերումս վախճանած Էդմոնդ-Աբուն գրել է Յունաստանի մասին մի թոյլ, բայց հետաքրքրական գրքոյկ, սրամիտ նկատողութիւններով լի։ Զարալեզու «Վոլտէրի

թոռը», այսպէս էին անուանում նորան, չնայելով որ ջանացել է կրքից հեռու մնալ, վերին աստիճանի խիստ է վերաբերւում դէպի հին աթենական դէմոսի սերունդները։ Նորա կարծիքով, այժմեան յոյները իրանց խաբեբայարուեստով կարող են ամօթ բերել և իրանց նախահաւ Յուլիսին, և նորա հովանաւոր Աթենաս-Պալլասին, և հին կրէտացիներին, որոնք, Էպիմէնիդի խօսքերով, այնքան յառաջադէմ էին այդ արուեստի մէջ։ Բացի դորանից, նոքա այնչափ ագահ են, որ անհնար է նկարագրել, ուրիշ ազգութեան պատկանող մարդոց հետ կառավարում են այնչափով, որչափ որ նոցա կարելի է քամել։ Քաջութեան տեսակէտից Կանարիսը, Աբուի հաստատելովը, բացառութիւն է կազմում, ուստի և յոյները նորա մասին խօսելիս ձայնը բարձր են հանում։ Աբուն առաջ է տանում իւր խօսքը և ասում է, թէ նոքա միշտ վախկոտ են եղել, մինչև անգամ Տրոյիայի պաշարման ժամանակ։ Ոչ ասպետական զգացմունք, ոչ ճշմարտութիւն մի դանկի չափ չկայ նոցա մէջ, բայց նոքա կուրօրէն յարգում են ամեն տեսակ ոյժ և ի հարկէ, սորան համապատասխան, արհամարհում են անզօրութիւնը, աղքատութիւնն ու թուլութիւնը։

Հազարաւոր անեկդոտների թւում նա առաջ է բերում և մէկը, որ և ես թոյլ եմ տալիս ինձ կրկնել, մանաւանդ, որ նա հենց մեզ է վերաբերում։

Այն մրրկից յետոյ, որ 1848 թուին ցնցեց Հաբսբուրգեան իշխանութիւնը, մի բուռն լեհացիներ բընակուեցան Աթէնք։ Այս մարդիկ սովից ու տենդից մեռնում էին, որովհետև Աթէնքի կլիման վնասակար է օտարերկրացիներին։ Սակայն և այն փշրանքներն անգամ, որ թափւում էին նոցա առաջ, յոյների կոկորդում ինչպէս ոսկոր էին դէմ ընկնում։ Նոքա խեղճերին վիրաւորում էին ամեն քայլափոխում, մենամարտի էին

դուրս կանչում և չէին երևում նշանակածտեղը։ Բայց մի անգամ Աթէնքում հրդեհ պատահեց, որ ամբողջ քաղաքին սպառնում էր։ Յոյները վազում էին ամեն կողմից, որ կրակին նայեն, մեծմեծ խօսեն և դուրս տան, — լեհերը (խեղրեմ միտներդ պահէք, որ ես Աբուի խօսքերն եմ կրկնում) ընկան բոցի մէջ և իւրեանց կեանքը վտանգի ենթարկելով հանգցրին կրակը։

Իսկ այժմ թող մէկը գուշակէ, թէ ինչ պարգև ստացան նոքա։

Նոցա պատուիրեցին Յունաստանից հեռանալ։

Լեհերի հետ այսպէս վարուեցան այն պատճառով, որ հրդեհից յետոյ նոքա հաչակուեցան յոյների շնորհիւ, որ նոցա վարմունքն ամբողջ Եւրոպայում տարածուեցաւ, իսկ այս կարող էր ընդհանուրի ուշադրութիւնը դարձնել, իսկ գուցէ և մի դիւանագիտական թուղթ դուրս կորզէր աւստրիական կառավարութիւնից, որ այդ միջոցին շատ վատ էր տրամադրուած դէպի լեհացի պանդուխտները։ Եւ այս բոլորովին բաւական էր։

Եթէ Աբուի խօսքերը ճշմարիտ են, — իսկ նա երբէք այնքան բարեկամ չէ եղել մեզ, որ այն տեսակ անեկդոտներ հնարէ, որոնք մեզ մեծացնելուն ծառայեն, — այն ժամանակ պէտք է խոստովանել, որ տրամաբանութեան հնարողի սերունդները չեն դադարել տրամաբանօրէն լինելուց, ինչպէս ինքը Ստագիրիտն էր, սակայն Արիստիդէսի աւանդութիւնները անհետ կորել են նոցանից։ Այնուամենայնիւ այն բանի մէջ, ինչ որ յոյների մասին ասում է վերը յիշած հեղինակը, ինչպէս նաև ուրիշ շատերը, անկասկած ծածկուած կան շատ չափազանցութիւններ, իսկ գուցէ և աւելի շատ թիւրիմացութիւններ։ Ամենից առաջ, իւրաքանչիւր այդպիսի ճանապարհորդ բերում է այստեղ իւր հետ արդէն պատրաստի էտիքական մի չափ, շատ ընդարձակածաւալ, որով-

ФУНДАМЕНТ. БИБЛИОТЕКА ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ

հետև նա մշակուել է արևմտեան քաղաքակրթութեան և նորա նրբացած բարոյակրթութեան ազդեցութեան տակ։ Եւ ահա մի տեսակ արշինով էլ չափում են հասարակութիւնը, որ դեռ մի փոքր առաջ ակամայից ընդունուեցաւ, իսկ և իսկ ամօթալի և գայթակղելի մի չափ, և դեռ չափում են սառնասիրտ կերպով, որովհետև գործը վերաբերում է ոչ թէ իրանց, այլ ուրիշներին։ Մոռանում են նոյնպէս, որ ինչպէս, օրինակ, ազնուութեան և ասպետական պահանջների մասին հասկացողութիւնը օտար էր հին աշխարհին, ճիշտ այնպէս կարող էր գոյութիւն ունենալ բարոյական հասկացողութեանց մի ամբողջ աշխարհ, որ օտար է արևելեան ազգերին, որ այս ազգերը, մանաւանդ յոյները, բարբարոս ցեղերից նուաճուելով, չունէին, իսկապէս ասած, երկար ժամանակ ոչինչ հասկացողութիւն, այլ իրանք ղեկավարուում էին,—որովհետև պէտք է մի բանով ղեկավարուէին,—միայն ինքնապաշտպանութեան գաղանային բնազդումներով։ Այս բնազդումը համապատասխանում է իրերի տուած դրութեան և վճռում էր ինչպէս էտիքայի, այսպէս նաև լոգիկայի խնդիրները։

Վայրենի ազգերը ամենուրեք միատեսակ են։ Երբ մի քարոզիչ պահանջեց մի նորադարձ նեգրից, որ նա մի օրինակ բերէ իրան այն բանի, ինչ որ նորա հասկացողութեամբ չար բան է համարուում, նեգրը մտածեց մտածեց ու այս պատասխանը տուեց.

—Եթէ մէկը կինս գողանայ,—դա չար բան կլինի։

—Շատ լաւ,—ասաց ուրախացած քարոզիչը։—Իսկ այժմ մի օրինակ բեր ինձ բարութեան։

Վայրենին մի րոպէ էլ չմտածեց։

—Իսկ բարի բան է,—եթէ ես մէկի կինը գողանամ։

Այսպէս է վայրենի կամ վայրենացող ժողովրդների ամբողջ լոգիկան։

Եւ այս լոգիկան ընդարձակ կերպով տարածուած է Արևելքում։

Բայց հանգիստ թողնենք յոյներին։ Պէտք է հին անեկդոտը ես նորա համար բերի, որ այդպիսի լոգիկայի արձագանքները լսում ենք և մասնաւոր ու հասարակական կեանքում։ Նա հետզհետէ աւելի ու աւելի մեծ ձայն է ստանում, սպրդում է լրագիրների էջերը, աճում է ինչպէս նեղուցի ալիքները, օրէցօր մեծացնում է այն անդունդը, որ կայ չարի և բարու մէջ, արդարութեան և անարդարութեան մէջ, անդամալուծում է ուղղուելու ընդունակութիւնը, խանգարում է և դէպի կատարեալ խաւար է տանում հասարակական կարծիքի բարոյական ունակութիւնները, որ վերջի վերջոյ չգիտէ կամ, աւելի ճիշտ, չէ ցանկանում գիտենալ, թէ ում ետևից գնայ և ում վերայ դրոշմէ նախատինքի կնիքը։ Այժմեան աշխարհը չէ կարելի վայրենի անուանել, բայց դուցէ մի յայտնի տեսակէտից, նա վայրենանում է։

Աբուն իւր գիրքը գրեց երեսուն տարի սրանից առաջ։ Այժմեան յոյն սերունդը այդպէս չէր վարուի, որովհետև նա քաղաքակրթուում է այս բառի լաւ նշանակութեամբ։ Վերածնուած, երիտասարդ, եռանդով լի, նա մշակուում է և աստիճանաբար կատարելագործում է իւր մէջ հոգու բոլոր կողմերը, իսկ 'ի միջի այլոց և բարոյական ունակութիւնները։ Հաւասարակշռութիւնը դեռ խախտուած չէ այնտեղ։ Նա այլ ևս վայրենի չէ, նորա երեսին արդէն ամօթ կայ։

Բայց և բացի դորանից, դեռ մի մեծ առանձնայատկութիւն էլ կայ, որին ոչ ոք կարող չէ խլել այժմեան յոյներից,-դա հայրենասիրութիւնն է, և այս հայրենասիրութիւնը նոյնպէս հիմնուում է դէպի հին Էլլադան ունեցած սիրոյ վերայ, ինչպէս և դէպի նորը։

Բանը նորանում չէ, որ աւանդութեան թելն այս-

տեղ արհեստական կերպով է կապուած, նորանում չէ, որ գիտնականները պնդում են, թէ այժմեան յոյների երակների մէջ հոսում է միայն մի կաթիլ իրանց հելլենական նախնիների արիւնից, այլ իրօք նոքա ներկայացնում են մի խառնուրդ զանազան ազգութեանց ստրուկների, ալբանացիների և սլաւոնների։ Յոյները, ինչպէս այդ երկրի ժառանգներ, ցանկանում են և նորա աւանդութիւնների ժառանգորդը լինել։ Այս պատճառով նոցա հայրենասիրութիւնը-այն տեսակ բոյս չէ, որի արմատները երկրի մակերևոյթի հետ են միայն կըպած,—նա խորը արմատ է գցած և անդրդուելի ոյժ ունի։ Ոյժ ունի նորա համար, որ պատմական մնալով և հետը միասին ցանկալով յառաջադիմել, նա հասկանում է, որ իւր գոյութեան խորհուրդը, կենսատու աղբիւրը-այնտեղ է, Ակրոպոլիս...

Մենք էլ գնանք Ակրոպոլիս, որովհետև այդ աղբիւրից ամեն մէկը կարող է մի բան օգտուիլ, ամբարելով գոնէ գեղարուեստական տպաւորութիւններ։

Ատտիկեան բոլոր հարթաղաշտը այնպէս փոքր է, որ նաւորդները, որոնք կանգ են առնում Պիրէյում միմիայն վեց ժամ, հնար են գտնում դալ այստեղ, տեսնել սրբազան ժայռը, Օլիմպիան Իւպետէրի և Թէզէոսի տաճարները,-և ժամանակին հասնել շոգենաւին։ Ես երեք շաբաթ միջոց ունէի,—ուրեմն ժամանակ ունէի ոչ թէ գիտնական հետազօտութիւնների, այլ լոկ դիտելու համար։ Սակայն աւելի հեշտ է Օրէնսգրական հրապարակից մինչև Ակրոպոլիսը անցնել, քան նկարագրել։ Բայց ես հելլէնագէտ չեմ, ես լոկ ուզում եմ արձանագրել իմ տպաւորութիւնները, և ոչ թէ ընդարձակ նկարագրութիւն անել հնութեան յիշատակարանների,-նոցա մասին առանց այն էլ ամբողջ հատորներ

կան գրած-պտուղ նստակեաց և երկարամեայ աշխատանքների։

Ոլորապտոյտ ճանապարհը անցնում է լերան ստորոտով, ուր բուսած են ագաւենիներ և կակտուսներ։ Առջևս և վրայիցս տեսնում եմ միայն մի հսկայական պատ, որ մասամբ հին հելլէնական ծագումն ունի, մասամբ հռովմայեցիներից և անգամ թիւրքերից է շինուած։ Ծայռերի միջանցքներից երևում են տաճարի եռանկիւնի տանիքները։ Երբ ես անցնում էի, շուրջը ամայի էր, կենդանի շունչ չկար, կէսօր էր և սարսափելի շոգ, չնայելով, որ արդէն նոյեմբերի առաջին օրերն էր։ Կողքի դռան մօտ նիրհում էր մի ծեր զինուոր. անցնում եմ նորա մօտից և դիտում եմ այն տնակը, որի մօտ դիզուած է մարմարիոնի կտորտանքի մի կոյտ։ Ուղին դարձեալ մի անգամ պտտուում է, ես բարձրանում եմ սանդուխտներով և ինձ գտնում եմ Պրոպիլէյում, որտեղից քո հայեացքի առաջ բացւում է ամբողջ վերին հրապարակը։ Առաջին տպաւորութիւնը.—աւերակ, մեռելային լռութիւն, մահ։ Պրոպիլէյի արտաքին դօրիական և յոնիական ներքին սիւներից մի քանիսը կանգուն են մնում միայն իրանց քարերի ծանրութեան շնորհիւ. պատերը ճղքճղքած, ծակծկուած, որոնց միջից ներս էր թափանցում լոյսը, խորտակուած։ Փառաւոր դռան ետև մի թիզ ազատ տեղ չկայ։ Այնտեղ դիզուած են պատերից թափուած սիւների, գօտիների, խոյակների կտորտանք և քարեր։ Այս բոլորը, բացի քանի մի տաճարներից, թափուած է մէկը միւսի վերայ, ամեն ինչ թափթփած է այնպիսի վայրի անկարգ դրութեան մէջ, որի մասին նոյն իսկ հռովմէական հրապարակը չէ կարող ամենափոքր գաղափար տալ։ Ճանապարհորդին այնպէս է թըւում, թէ այստեղ տեղի է ունեցել հսկաների մի զարհուրելի ճակատամարտ, հսկայական ոյժերի շփումն, որից

լեռը ճղքուել է, պատերը քանդուել են, վերջապէս փուլ է եկել ամեն ինչ և միայն աւերակներն են մնացել։

Այսպէս ուրեմն, առաջին տպաւորութիւնը, որ ստանում ես Պրոպիլէյն անցնելիս, աղէտների տպաւորութիւնն է։ Այնտեղ ակամայից դանդաղ ես առաջ գընում, որովհետև բոլոր շրջապատողներն այն աստիճան մեռելային տիպ են կրում, որ քո իսկ կեանքը, քո սեպհական շարժումներն էլ մի տեսակ օտարոտի են թւում և անհամապատասխան այդ վայրին։

Եթէ մի ծանօթի ես պատահում այդտեղ, նորա հետ չես էլ ուզում խօսել, այլ միայն հարցական մի հայեացք ուղղել նորա աչքերին, նստել մի ստուերի տակ և հետևել թէ ինչպէս արևը իւր ճառագայթներով ջերմացնում է աւերակները։

Ես արդէն ասացի, որ այդտեղ լոյսը չէ մտնում, այլ թափւում է հոսանքներով, մանաւանդ կէսօրին։ Եւ կարող էր այնպէս թուալ, որ այդ ջերմ, կենդանի հոսանքը մի տեսակ հակապատկեր է ներկայացնում այդ աւերակին, ամայութեան, այդ մեռելային լռութեան։ Բայց չէ։ Աւերակն էլ, ամայութիւնն էլ դորանով աւելի մեծ, համարեա խիստ տպաւորութիւն են ստանում։ Նստած ես, նայում ես Պարթենոնի և Էրէխտէյոնի արևից ջերմացած մարմարիոնին, և վերջապէս մէկ ինչ որ դուրս է գալիս աւերակների միջից, մօտ է գալիս և մտնում է քո մէջ։ Եւ դու լաւ ես զգում քեզ, որովհետև խաղաղութիւն է իջնում քեզ վերայ, բայց այնպիսի ուժգին խաղաղութիւն, որ ունին միայն քարն ու փլատակը։

Ես կարծում եմ, որ ում հոգին աւելի շատ է տանջուել, նա իրան լաւ պիտի զգայ այստեղ։ Մարդ ուզում է գլուխը դնել սեան չորեքկուսի մոյթին, փոխէ-փոխ մերթ գոցել, մեր բանալ աչքերը,—և հանգիստ

վայելել։ Այս ամենը աւելի ու աւելի ընտանի են դառնում, յոգնած ճանապարհորդն աւելի բարեկամաբար է նայում Պարթենոնի այս յանդուգն գծերի, սպիտակ Էրէխտէյոնի, ցածրում ընկած Պրոպիլէյի վերայ։ Պէտք է տեսնել հասկանալու համար, թէ ինչպէս այս հնութիւնից ոսկիացած շինուածքները գեղագարդւում են արևի և կապոյտ երկնքի տակ, ինչպիսի հանգստութիւն է շնչում այդ քովիթարներից, սիւների և պսակների այդ շարքից։ Պարզութիւն, խաղաղութիւն, վեհութիւն և գրեթէ աստուածային ներդաշնակութիւն։ Միանգամից դժուար է այս նկատել, կախարդանքը ներգործում է սակաւ առ սակաւ, բայց նոյնքան էլ ուժեղ է թափանցում սրտի մէջ և լցնում նորան զմայլումով։ Եւ զգում ես դու, ով ուղևոր, որ ոչ թէ միայն հանգստութիւն շնորհեցին քեզ արուեստի այս սքանչելի կերտուածները, այլ և մասը հանեցին քեզ իրանց գեղեցկութիւնից։

Ահա այն տպաւորութիւնները, որ ստանում ես Ակրոպոլիսի միջովն անցնելիս։ Երբ դու այնտեղ ես գտնւում, մտքովդ էլ չէ անցնում Իգէկէրը բանալ և որոնել նորա մէջ մանրամասն բացատրութիւնները։ Տանն ես կարդում միայն, որ Անթև Յաղթութեան փոքրիկ տաճարը շատ ժամանակ չէ միայն, որ աւերակներից նորոգուել է, որ լորդ Էլջինը բրիտանական թանգարանի համար բերել է հրաշալի կարիատներից (caryatide) մէկը, որոնք Էրէխտէյոնի աջ սրահների նեցուկն են կազմում, որ այնտեղ են ուղարկուած պարթենոնեան ճակատները (métope), որ Էրէխտէյոնում փաշաների հարէմն էր գտնւում և այլն։

Առաջին վայրկենին քեզ համար բոլորը մէկ է, թէ Պարթենոնը պարզ դորիական ոճով է շինած, Էրէխտէյոնը և Յաղթութեան տաճարը յոնիական, իսկ Պրոպիլէյում գտնւում են այդ երկու օրդէնների սիւները։

Այս ամենը Աթէնք գալուց առաջ էլ գիտէիր։ Այստեղ ամենից առաջ փչում է քեզ վերայ ընդհանուր շունչ, կամ աւելի ճիշտ-հին Էլլադայի հանճարը, և նորա շունչը դու չես ցանկանում ոչ վանել, ոչ վերլուծել։ Եւ ահա երևակայութիւնն սկսում է գծագրել, թէ ինչպէս էր Ակրոպոլիսը Պերիկլէսի ժամանակ, երբ ամեն ինչ իւր տեղն էր, երբ տաճարները գոյութիւն ունէին, որոնց հետքն էլ չէ մնացել այժմ, երբ գոյութիւն ունէր արձանների մի ամբողջ անտառ, երբ Պարթէնոնը կեղեքուած չէր իւր բոլոր զարդերից, երբ նորա սիւների պսակների վերայ կարելի էր տեսնել Աթէնքի ծագման ձևակերպութիւնը, իսկ միւս կողմից-նորա վէճը Նէպտունի հետ, իսկ Աթենաս Պրոմաքոսի սաղաւարտը ծովից անգամ երևում էր։ Պատկերացնենք մեզ մի որևէ փառաւոր հանդէս. քուրմեր, աւագանիք, զինուորականներ, երաժիշտներ, ժողովուրդ, ոսկեզօծ եղջիւրներով եզներ, որոնց ներս են տանում տաճարների սրբութիւն սրբոցը, ծաղկէ պսակներ և գեղայարմար ծալուածքներով զարդարուած շալեր։ Բայց ես նախադասում եմ պատկերացնել գիշերը և մարմարիոնի խաղացող լուսնի բաց-կանաչ լոյսը։ Մարդ դժուարանում է հաւատալ, որ մարդիկ կարող էին այդ աստիճան առաջ գնալ արուեստի մէջ, բայց հասկանալ կարելի է։ Յունական դիցաբանութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ընութեան ոյժի առջև խոնարհումն, այն է ուղղակի ամենաստուածեան մի աղանդ (panthéisme)։ Բայց արուեստագէտը յոյնի հոգու մէջ յաղթեց փիլիսոփային, այս պատճառով բանաստեղծները վերացական հասկացողութիւն հազցրին մարդկային մարմնին, մարդկային միտք շնորհեցին նորան, իսկ յետոյ եկաւ ստեղծական արուեստը և այդպիսի հրաշալի քարեայ առեղծուած ծնեց։

Աթէնքը կարողացաւ իւր քաղաքի համար տեղ

ընտրել։ Եւ ի՞նչ մակերևոյթ այս բոլոր տաճարների և յուշարձանների համար։ Մէկ կողմից ծովն է երևում, որ այստեղի մթնոլորտում շատ մօտ է թւում, միւս կողմից-ամբողջ Ատտիկէն, ինչպէս ափիդ վերայ։ Հիմէտի լեռները, նորանից յետոյ Պէնտէլիկոնը, հիւսիսում Պարնասը, իսկ հարաւ-արևմտեան կողմը, Սալամինեան քարանձաւի կողմը, Դափնին։ Այս ամենի վերև մշտապարզ երկինքը, և արծիւների սեաւ լուսաստուերծիրը (silhouette), որոնք մինչև այսօր իրանց ճիչերով ընդհատում են Ակրոպոլիսի հանդիսաւոր խաղաղութիւնը։

Այն տպաւորութիւնները, որ ստանում ես ուրիշ աւերակները տեսնելիս, միայն մի թոյլ ստուեր են այն տպաւորութիւնների, որոնք զարթնում են Ակրոպոլիսը տեսնողի հոգու մէջ։ Մնէզիկլին, Իկտինին և Կալլիկրատին ոչ ոք դեռ չէ համեմատուել ոչ Պերիկլէսից առաջ, ոչ էլ յետոյ։ Նոքա ստեղծեցին ոչ միայն Պարթէնոնը, Էրէխտէյոնը կամ Պրոպիլէյն, այլ դոցա հետ բարձրացրին ճարտարապետական վարդապետութիւնը, որին պէտք է հետևէին հին աշխարհի բոլոր ճարտարապետները։ Հռովմայեցիք աւելացրին իրանց սեպհական կամարը, կանգնեցին անդրիներ, սահմանների արձաններ, կրկէսներ, բոլորաձև տաճարներ, Ագրիպպասի պանթէոնի նման,—այս է բոլորը։ Բայց առհասարակ նոքա հետեւում էին իրանց անմահ նախորդներին և նոցա վարդապետութիւնից չէին հեռանում։ Նոքա կարող էին Ակրոպոլիսին միայն ծաւալով գերազանցել և իրագործեցին այս մինչև անգամ Աթէնքում։

Ակրոպոլիսից ցած, ժայռի պատառուածքից դէպի արևելք, Իլլիսի վերայ, կանգնած է Ոլիմպեան Իւպիտերի տաճարը, որ աւարտուեցաւ Հազիւ Ադրիանոս կայսեր ժամանակ։ Հարիւր քսան սիւներից, որոնց վերայ հաստատուած էր նա, այժմ մնացել են միայն 16,—13ը

մի ծայրից և երեքը միւս։ Այս սիւները իսկևիսկ կորնթեան ոճով են և ունին 6 ոտն. լայնութիւն և 60 բարձրութիւն։ Սա ամենից մեծ տաճարն էր այն դաշտավայրում, որ ոռոգւում է Կէֆիզով և Իլլիսով։ Տիտոս Լիվին դորա մասին ասում է, որ իւր մեծութեամբ միայն դա էր համապատասխանում այն Աստուծոյ մեծութեան, որին նուիրուած էր (unum in terris inchoatum pro magnitudine dei)։ Եւ շատ էլ հաւանական է, Զևսը, որ ինչպէս Աթենասի հայր ամեն աստուածներից մեծ էր, արժանի էր ահագին տաճարի։

Ես չեմ ասում, թէ Ակրոպոլիսը ստեղծողները ծընեցին յունական ճարտարապետութիւնը։ Նոքա ներկայանում են միայն իբրև նորա վերջին և ամենաբարձր ներկայացուցիչները, հաստատեցին նորա վարդապետութիւնը, նոյն իսկ նորանով, ինչով Ֆիդիան իւր ժամանակ էր քանդակագործութեան վերաբերութեամբ։ Թէզէոսի տաճարը, որ նման է Պարթէնոնին միայն նուազ չափով, Պարթէնոնից առաջ է կառուցած, նոյնպէս և բազմաթիւ ուրիշ տաճարներ, որոնցից յետոյ միայն տեղ-տեղ միանման սիւներ են մնացել։ Այս Թէզէյոնը հընութեան աւելի լաւ պահպանուած յիշատակարաններից մէկն է։ Ակրոպոլիսում ամրոց կար, ապա ուրեմն նա աւելի է ենթարկուել պատերազմի բոլոր վտանգներին, իսկ նոր ժամանակներումս անգամ և ռմբակոծութեան,—Թէզէյոնը կանգնած էր քաղաքի մէջ տեղը։ Նա աւելի շուտով ներքին փոփոխութեան է ենթարկուած, որովհետև նորան քրիստոնէական տաճար դարձրին և 'ի հարկէ դէն ձգեցին նորա բոլոր յուշարձանները։ Այժմ պահւում են նորանում դաճեայ այլ և այլ տիպեր և խորաքանդակների մնացորդներ, որոնցով երբեմն զարդարում էին ուրիշ տաճարները։ Ես ասացի, թէ Թէզէոսի տաճարը Պարթենոնն է յիշեցնում.

բայց որովհետև նա գտնւում է մի փոքր ինչ բարձր անձուկ հրապարակի վերայ, ուստի և մի առանձին աչք շլացնող տպաւորութիւն չէ գործում, մանաւանդ որ ծաւալով էլ չափազանց փոքր է։ Պարթէնոնը ութն մոյթ ունէր ճակատի գծով և տասնևեօթը հատ կողքի գծով,—Թէզէոսի տաճարում կար վեց և տասներեք։ Վերջապէս, նա այնքան էլ հարուստ չէր, որովհետև Թէզէան ակրոպոլեան տաճարի երկու ճակատների պսակները զարդարեց կիսարձաններով, իսկ բոլոր ճակատները (metope) խորաքանդակներով,—Թէզէոսի տաճարում այս զարդերը աւելի պակաս թուով էին։

Թէզէոսի տաճարի հրապարակից երևում են Պնիկսի ժայռերը։ Երբեմն սա ժողովարանի տեղ էր ծառայում։ Զանազան տեղեր դուրս փորուած քարեայ սանդուխները ցոյց են տալիս, թէ ինչպէս էր ամբոխը բարձրանում որպէսզի ամենաբարձր դարատափին հասնէր, որտեղից կարելի է տեսնել Աթէնքը հէնց քթի տակ, աջ կողմից՝ Մուզէյոն գետը, առջևից—Ակրոպոլիսը։ Այդտեղ ոչ մի շինութիւն չկայ, երևում են միայն ահագին ամբիոնի հետքերը, որոնք հնումը Բեմ էին կոչւում, և որի վերայ նստում էր ժողովուրդը խորհրդակցութեան միջոցին։ Այս ժայռերը խաղաղ զուրկ են բուսականութիւնից և կատարեալ անապատ են ներկայացնում. ես այնտեղ մարդկային ոչ մի շունչ չգտայ, քաղաքի աղմուկն այդտեղ չէ լսւում և լռութիւնը խանգարում է միմիայն բարձունքում ճախրող արծիւների ճիչը։

Այդքան անձայն չէ, բայց նոյնպէս ամայի է և արէոպագի գլուխը, որ ընկնում է ակրոպոլեան լերան փեշին։ Քաղաքի իր մէջ և նորա շրջակայքում էլի ուշադրութեան արժանի յիշատակարաններ կան. Ադրիանոսի կամարասրահը, Ատալի, Ագորի կամարասրահը, Հողմերի աշտարակը, Լիզիկրատի փոքր տաճարը, Ադ-

ըիանոսի կամարը և Ֆիլոպապի արձանը, վերջապէս նո-
ըերումս գտած՝ Գագիա Տրիադի գերեզմաննոցը, ուր
կարելի է տեսնել քանի մի գեղեցիկ, անգամ շատ գե-
ղեցիկ արձաններ։ Սակայն ես յանձն չեմ առնի նկարա-
գրել նորանց, ես միայն հաշիւ եմ տալիս իմ տպաւո-
րութիւնների մասին և գլխաւորապէս կանգ առայ Ակ-
րոպոլիսի վերայ, որ աւելի ուժգին է խօսում այն հո-
գու հետ, ուր կենդրոնանում է ամեն լաւ բան, ինչ
որ միայն ստեղծել է ստեղծական արուեստի աշխար-
հում հելլէնական քաղաքակրթութիւնը, յունական հան-
ճարի ամբողջ ոյժը։ Թուկիդիդն հարկաւ 'ի նկատի ու-
նէր Ակրոպոլիսը, երբ ասում էր, որ եթէ Աթէնքը կոր-
ծանուի, մնացորդ աւերակներից սերունդները կենթա-
դրեն, թէ այդտեղ կրկին անգամ աւելի զօրեղ քաղաք
է եղել, քան իրօք կայ։ Սակայն Թուկիդիդը սխալուե-
ցաւ. Աթէնքը աւելի զօրեղ երևեցաւ, քան կարծուում
էր։ Հին քաղաքը կործանուեցաւ, աւերակ է դարձած,
բայց նորա հանճարը այնքան բան է տուել, որ մարդկու-
թիւնը չի կարող մոռանալ, որ նորան է պարտական։ Նա ար-
համարհեց նորան և այն էլ չափազանց երկար ժամանակ,
բայց կան պարտաւորութիւններ, որոնք իրանց մասին
յիշեցնել են տալիս ոչ միայն խելքին, այլ և խղճին։
Դոցա շնորհիւ այն փառաւոր երկիրը դուրս կորզեցին
թիւրքերի իշխանութիւնից։ Միայն քաղաքական շահը
չէր, որ դրդեց յարութիւն պարգևել Յունաստանին.—
Եւրոպայի համար սա մի ստիպողական պարտք էր, որ
հատուցումն էր պահանջում, դա խղճի խնդիրն էր։ Կան
քաներ, որոնց նոյն իսկ ամենաողորմած խիղճը տանել
չէ կարող,—և ահա վայրկեանը հասաւ, երբ Նաւարի-
նի տակ թնդանոթները որոտացին։ Ես հաւատացած
եմ, որ եթէ այս ահագին credit-ը չլինէր, որ ժամա-
նակակից քաղաքակրթութիւնը գրել էր Յունաստանի

հաշուին, եթէ սորա փառքը և գործերը չլինէին, Հո-
մերի երգերը, Մարաթոնի և Սալամինի յիշողութիւն-
ները չլինէին, չլինէին ակրոպոլեան հրաշալիքների այս
փլատակները,—փաշաները մինչև այժմ էլ իրանց հա-
ըէմները պահելիս կլինէին Երէխտէյոնում, և Ակրոպո-
լիսի բարձունքից կծածանէր մարգարէի դրօշակը։ Եւ
եթէ, ասում եմ ես, այժմեան Յունաստանը ստեղծեցին
Հոմերը,, Միլտիադը, Լէօնիդը, Թէմիստոկլը, Թիդէան
և այլ հերոսներն ու հանճարները, որոնք ոչնչով չեն
կարող չափուել, սա ոչ թէ հռետորական ձև է, այլ
պատմական ճշմարտութիւն։ Աշխատելով իրանց ազգի
փառքի համար, նոքա, առանց իմանալու, աշխատեցան
նորա վերածնութեան համար,—և ահա այս անմահ
աշխատաւորների շնորհիւ է, որ ապրում է այժմեան
Յունաստանը։

ԳԻՏ ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

Ա. Աշխատութիւնները.

Աղոթատետր. բ. տպ. 1889 . . . . . — 10
Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած.) . . . . . — 15
,, բ. տ. Դ. տպ. 1891 . . . . . — 25
,, գ. տ. Գ. ,, 1890 . . . . . — 25
Տոմար եւ տօնացոյց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ բ. տպ. 1894 . . . . . — 50
Կարնոյ գաղթբ. պատմ. տեսութիւն, 1891 . . . . . — 10
Դիւան Հայոց պատմ.. գիրք Ա.-Բ. 1780—1834 Սահ.-Մեսրոպ. մրցանակին արժանացած 1893 . . . . . 2 —
Դիւան Հայոց պատմութեան. գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը. կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով. Սահակ-Մեսրովպ. մրցանակին արժանացած, 1894 . . . . . 7 —
Կարգ Աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ. բ. տպ. 1895 . . . . . — 40
Պատի օրացոյց ժամանակագրութեամբ. Ը. տարի, 1896 . — 60

Բ. Թարգմանութիւնները.

Հաւատարմութիւնն ամեն արգելքների յաղթում է. Գ. Հոֆմանի. 1877 . . . . . — 40
Խաւարից դէպի լոյս. Գ. Հոֆմանի. 1877. . . . . — 40
Դօն Քիշոտ լամանչեցի Մ. Սերվանտէսի 1878 (սպառուած) — 70
Գէորգ Ռոլլէտոն, վէպ 1879 . . . . . — 60
Երրորդ ոսկի, առակ Լակիգէի բ. տպ. 1893 . . . . . — 10
Ռոբինզոն (հրատ. Թիֆլիզի տպագր. ընկ.) 1881 . . . . — 60
Զէստերտոնի ժառանգը. պատկ. 1882 . . . . . 1 —
Ակտեա, ա. Սիսոեվայի 1885 . . . . . — 50
Եան Էրնստ Սմելեար. Ն. Եանչուկի 1885 . . . . . — 20
Արծուի մոտամուտքը. պրոֆ. Մ. Բոգդանովի 1892 . . — 05
Գիւղի սուրբը, Սվետասոպոլկ Զէլիի. 1892 . . . . . — 10
Կեանքի դպրոցը, Դիկկէնսի 1892 . . . . . 1 —
Վէպի ԱԹԷՆՔ. Սենկեւիչի, 1896 . . . . . — 15
Մի կտոր հաց. Պոտապէնկոի. 1896 . . . . . — 10

Գ. Հրատարակութիւնները

Իս. Ցարութիւնեան. Հայոց գիրք. 1893 Տփխիս. . . . 1 50
Իշխ. Կ. Բեհբուդեան. Ծուխ. 1893 . . . . . — 15
Նզաբէ. Էմակ. վէպ. Թարգմանութիւն Ց. Լալայեանի . — 25
Ալ Ամնո. Քուրդի լեառն. Թարգմանութիւն 1894 . — 25

Ճաղարբեգեանց Յ. Հայոց լեզու. ա. ա. դասագիրք հայ ծխ. դպր. համար 1894 . . . . . — 30
Սգիրի. Այծարած Մոնի. թարգ. Խ. Յարութիւնեանց 1895 — 15

Լումայ. գրական հանդէս 1896. ա. գիրք . . . . . 2 —

Բացուած է „ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ“ ժողովածուի Դ. և Ե. գիրքերի բաժանորդագրութիւնը. Դ. գիրքը այս օրերս մամուլի տակ կմտնի: 2 գիրքը արժէ 3 ռուբլի:

Դիմել հրատարակչին կամ Կենտրոնական գրավաճառանոցը:

Սոյն **1896** *թ. յունուարից հրատարակւում է Տփխիսում*

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Առաջին գիրքը լոյս է տեսնում յունուարի 1-ին, իսկ երկրորդը՝ յուլիսի 1-ին:

«ԼՈՒՄԱՅ» հանդիսի բաժանորդագինն է 3 ռ. Իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռ.

Ն ո ր Մ ա տ ե ն ա դ ա ր ա ն.

Խուլ Խաչիկ, պատմ. վէպիկ. Ս. Քամալեանց 1894. . . — 25
Գէրիզադէի երգը, փոքր Ասիայի կեանքից, թարգ. Յ. Լալայեանց 1894 . . . . . — 25
Ղարիբ Մշեցի, պատկեր տաճկահայերի ներկայ կեանքից, 1894 — 10
Հուբլէյ. Տարերք բնական գիտութեանց. թարգմ. Խ. Յարութիւնեանց Օժանդակ ձեռնարկ հայ դպր. համար 1894 — 40
Ճաղարբեգեանց Յ. Վահան Մամիկոնեան 1894 . . . — 40
Սգիրի. Արզեան հովիւ. թարգմ. Խ. Յարութիւնեանց 1895 — 15

Դիմել կենդր. գրավաճառանոցը կամ Լումայի խմբ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0666936